



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԿԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 27 Մարտը Մեծ Պահոց 4-րդ Կիրակին է, որ կը կոչուի Տնտեսի Կիրակի:

Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան պիտի հանդիսապետէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քինյ. Խաչատուրեան:

Ուրբաթ, 25 Մարտին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Հսկումի խաղաղական եւ հանգստեան ժամերգութեան պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Արարողութեան ներկայ պիտի ըլլայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

Sunday, March 27th, is the fourth Sunday of Great Lent, which is known as Sunday of the Steward.

H.E. Archbishop Moushegh Mardirossian will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

Parish Pastor Rev. Fr. Razmig Khatchadourian will celebrate Divine Liturgy.

On the evening of Friday, March 25th, the Prelate will preside over Vigil service at Holy Martyrs Church. Sunday School students will attend the service.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԷ ՄՈՆԹԵՊԵՐՆՈՅԻ
Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ
ՄԻԶԻՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Չորեքշաբթի, 30 Մարտը Միջինք Է. Մեծ Պահոց կ'էսը:

Չորեքշաբթի, 30 Մարտին, կ.ա. ժամը 10:30-ին, Առաջնորդ Սրբազան
Հայրը պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի
Արեւագալի ժամերգութեան:

Արարողութեան ներկայ պիտի ըլլան Մոնթեպելլոյի Մեսրոպեան
Ազգային վարժարանէն խումբ մը աշակերտներ:

Արեւագալի արարողութենէն ետք, Ս. Խաչ եկեղեցւոյ Տիկնանց
Միութիւնը, Միջինքի առթիւ, սիրոյ ճաշ կազմակերպած է, որ տեղի պիտի
ունենայ եկեղեցւոյ կից «Բաղրամեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու
ներկայութիւնը:

Գեղարուեստական յայտագիրին, իրենց մասնակցութիւնը պիտի
բերեն Մեսրոպեան Ազգային վարժարանի աշակերտները:

**PRELATE TO PRESIDE OVER SUNRISE SERVICE AND
MID-LENT LUNCHEON AT HOLY CROSS CATHEDRAL IN
MONTEBELLO**

Wednesday, March 30th, is Mid-Lent or *Michink*.

On this occasion, the Prelate will preside over Sunrise Service at Holy
Cross Cathedral in Montebello. Armenian Mesrobian School students will
attend the service.

The mid-Lent luncheon organized by the Parish Ladies Auxiliary will
follow at the adjacent "Bagramian" Hall. The Prelate will attend the luncheon.
Mesrobian School students will participate in the cultural program.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ՝ ՀԱՅԿԱԿԱՆ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՄԱՍԻՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան
Ուրբաթ, 25 Մարտի կէսօրին, Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց
այցելութիւնը Տիկին Ռոբսան Մաքսանեանի եւ Տիար Բաֆֆի Մոմենեանի, որոնք
եկած էին գեկուցում տալու Հայկական Ցեղասպանութեան դասաւանդման
ծրագրի մը մասին:

Յարգելի հիւրերը բացատրեցին, թէ իբրեւ ոչ-հասութաբեր
հիմնարկութիւն, մշակած են յատուկ դասագիրք մը, որ պիտի ծառայէ
ցեղասպանական արարքներու մասին դասաւանդումի: Դասագիրքը

կ'առաջարկուի պետական վարժարաններու, որովհետեւ Քալիֆորնիա եւ անլի քան տասնեակ մը նահանգներ յատուկ օրէնք որդեգրած են ցեղասպանութեան դասաւանդման մասին: Անոնք բացատարութիւններ տուին դասագիրքին ընկերացող դասաւանդման նիւթերուն մասին, ներառեալ՝ արդի արհեստագիտութեան ու հաղորդակցութեան միջոցներ (համացանցային կայքէջեր եւայլ):

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց տարուած աշխատանքն ու մարդկային հիմնական իրաւունքներու պահպանման հանդէպ ցուցաբերուած նախանձախնդրութիւնը: Ան արդար նկատեց, որ նման ծրագիր, իբրեւ Հայ Դատի ծանօթացման յաւելեալ աշխատանք, մատուցուի նաեւ հայ աշակերտներու: Ան պատրաստակամութիւն յայտնեց ըստ կարելոյն աջակցելու այս աշխատանքին:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց հիւրերուն:

PRELATE MEETS WITH MEMBERS OF THE GENOCIDE EDUCATION PROJECT



On Friday, March 25th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mrs. Roxanne Makasdjian, one of the founders and board members of The Genocide Education Project (GenEd), and Mr. Raffi Momjian, GenEd director, who had come to report to the Prelate on the mission of the organization.

The guests reported that GenEd is a non-profit educational organization whose mission is to ensure that students in public schools learn about the Armenian Genocide. To further this mission, the organization has published textbooks and materials to be used in public schools, and also organizes workshops to train teachers.

The Prelate highly commended the initiative of the guests in establishing GenEd and their commitment to carrying out the vital mission of the organization. He also suggested that the materials GenEd prepares be made available to Armenian students as well as, a supplement to their

curriculum.

At the conclusion of their meeting, the Prelate expressed his support for the organization's endeavors, and presented the guests with mementos.

Յ.Մ.Ը.Մ.Ի ԲԱՅԱՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կազմակերպութեամբ Յ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան, Կիրակի, 27 Մարտին, կ.ե. ժամը 4:30-ին, Յ.Մ.Ը.Մ.-ի եւ ԲԱՅԱՄ-ի 27-րդ մարզախաղերուն փակման հանդիսութիւնը եւ աշակերտական տողանցքը տեղի պիտի ունենայ Կլենտէյլ Բուլեճի մարզադաշտին մէջ:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Բինյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ փակման հանդիսութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան խօսքը:

KAHAM GAMES CLOSING CEREMONY

On the afternoon of Sunday, March 27th, the closing ceremony of the 27th KAHAM games will take place at Glendale College.

The games are organized annually by the Homenetmen Regional Executive.

Rev. Fr. Ardak Demirjian will attend and convey the Prelate's blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՌԵՏՈՒՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Լոս Անճելըսի Հայ Ամերիկեան Առեւտուրի Գրասենեակի 12-րդ տարեդարձին առիթով, ճաշկերոյթ տօնակատարութիւն մը կազմակերպուած է, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Մարտի երեկոյեան Կլենտէյլի Հիլթըն պանդոկին մէջ:

Գնահատանքի պիտի արժանանան գաղութիս մէջ յաջողութիւն արձանագրած հետեւեալ անձնաւորութիւնները.-

Karoun Dairies Հաստատութեան նախագահ՝ Տիար Անո Պաղտասարեան, Silvia's Costumes Հաստատութեան նախագահ՝ Սիլվիա Չաքմազճեան եւ Muse Lifestyle Group-ի նախագահ՝ Տիար Միքայէլ Խրայէլեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

ARMENIAN-AMERICAN CHAMBER OF COMMERCE GALA

On the evening of Saturday, March 26th, 2010, the 12th annual awards business gala of the Armenian-American Chamber of Commerce will be held at the Glendale Hilton.

During the banquet, Karoun Dairies CEO Mr. Anto Baghdassarian, Silvia's Costumes President Mrs. Silvia Tchakmakjian, and Muse Lifestyle Group CEO Mr. Mikayel Israyelyan, will be honored for their contributions to the community.

The Prelate will attend and deliver his message.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԲՈՒԵԹԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ 50-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

2010-2011 տարեշրջանը Բուէյթի Ազգային վարժարանի հիմնադրութեան ոսկեայ 50-ամեակի տարեշրջանն է:

Այս առիթով, Բուէյթի Ազգային վարժարանի 50ամեակի Զանդիսութիւններու Արեւմտեան Ամերիկայի Գործադիր Մարմինը կազմակերպած է տօնակատարութիւն ճաշկերոյթ մը, որ կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը:

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Մարտի երեկոյեան, Renaissance ճաշարանին մէջ, Կլենտէյլ:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

Առաջնորդ Սրբազան Զօր պիտի ընկերանայ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան:

50TH ANNIVERSARY OF THE KUWAIT ARMENIAN SCHOOL

The 50th anniversary of the Armenian School of Kuwait will be celebrated on Saturday, March 26th, under the auspices of the Prelate with a gala to be held at Renaissance Hall in Glendale.

The Prelate will attend and convey his blessings. Very Rev. Fr. Muron Aznikian will accompany the Prelate.

Յ.Բ.Ը.Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՏԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ 35-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Յ.Բ.Ը.Ս. Մանուկեան Տեմիրճեան վարժարանին 35ամեակին նուիրուած տօնախմբութիւն մը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Մարտի երեկոյեան, Ronald Reagan Գրադարանի սրահին մէջ, Սիմի Վելի:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազան Զայրը գնահատանքի եւ շնորհաւորանքի գիր մը յղած է, բարձր գնահատելով վարժարանին, տնօրէնին, դաստիարակներուն, Յ.Բ.Ը.Ս.ի եւ բարերարներուն ու ծնողներուն նուիրումը:

AGBU MANOOGIAN DEMIRDJIAN SCHOOL 35TH ANNIVERSARY

On Saturday, March 26th, the 35th anniversary of AGBU Manoogian Demirdjian School will be celebrated with a banquet at the Ronald Reagan Library in Simi Valley.

The Prelate has sent a letter to the administration, congratulating them on this milestone and commending all those who devote their time and efforts to the advancement of the school.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՀԱՅԿ ԴԵՄՈՅԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԱՐԱՆԴԵՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ

Հովանաւորութեամբ Հ.Ս.Ը.Ս.ի Շրջանային Վարչութեան, Հինգշաբթի, 24 Մարտի երեկոյեան, Հ.Ս.Ը.Ս.ի «Գեորգ Աստուծան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Ցեղասպանութեան Թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանի «Հայկական Սպորտը եւ Մարմնակրթութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» գիրքի ողջոյնահանդէսը:

Ձեռնարկին պաշտօնական բացումը կատարուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով եւ սրտի խօսքով: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանար Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան:

Հանդիսավարն էր Տիկին Լիլիթ Պաղտասարեան:

Հեղինակն ու անոր գործը ներկայացուց Տիար Սարգիս Մահսերեճեան:

Խօսք առաւ նաեւ հեղինակը:

Հարց ու պատասխանի առիթ տրուեցաւ:

HAYK DEMOYAN LECTURES ON "ARMENIAN SPORTS AND ATHLETICISM IN THE OTTOMAN EMPIRE"

Director of the Armenian Genocide Museum-Institute in Yerevan, Mr. Hayk Demoyan, is currently in Los Angeles to present four lectures on "Armenian Sports and Athleticism in the Ottoman Empire" and "The Armenian Genocide: Centennial Anniversary and Commemoration Strategies".

The lectures are co-sponsored by Homenetmen Regional Executive, Armenian National Committee-Western Region, Organization of Istanbul Armenians, Ararat-Eskijian Museum, and the National Association for Armenian Studies and Research.

The first of these lectures took place on the evening of Thursday, March 24th, at the "Kevork Andonian" Hall of the Homenetmen headquarters.

The event opened with the Prelate's blessings and message.

Rev. Fr. Gomidas Torossian accompanied the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԵՑ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ



Չորեքշաբթի, 23
Մարտին, Առաջնորդ Սրբազան
Հայրը հանդիսապետեց
Փասատինայի Ս. Սարգիս
եկեղեցւոյ Արեւագալի
ժամերգութեան:

Սրբազան Հօր
ընկերացան Գերշ. Տ. Եփրեմ
Արք. Թապագեան ու Թեմիս մէջ
ծառայող միաբան եւ քահանայ
հայրեր:

Արարողութեան ներկայ
էին Փասատինայի Լեւոն եւ
Յասմիկ Թալեան Ազգային
Մանկամտուր-
Մանակապարտեզի
աշակերտներն ու իրենց
պատասխանատուները:

Այս առիթով, Գերշ. Տ.
Եփրեմ Արք. Թապագեան

կատարեց օրուան խորհրդածուրբիւնը:

PRELATE PRESIDES OVER SUNRISE SERVICE AT ST. SARKIS CHURCH IN PASADENA



On Wednesday, March 23rd, the
Prelate presided over Sunrise Service at
St. Sarkis Church in Pasadena. H.E.
Archbishop Yeprem Tabakian, Very
Rev. Fathers Muron Aznikian and
Barthev Gulumian, and clergy members
participated in the service.

Students of Levon and Hasmig
Tavlian Pre-School were in attendance
with their teachers and parents.

The day's message was
delivered by Archbishop Tabakian.

The Parish Ladies Auxiliary hosted the faithful to a breakfast following the service.
